



## 82. ՃԱԿԱՏԱԿԻՐԸ

Ախշարքիս պանը իմացվիլ չի, թա խի, պատմեմ, լսե՛ք:

Ասլան անբրով մին փահհլրվան արազըմը տեսնըմ ա, որ արևը վեր ա եկել մին ուսին, լիսնյագը՝ մեկէլ: Դե ով չի արագ տեսնըմ, համ էլ ասըմ են՝ ում քամակը քըշերը պաց ա ինըմ, էն ա արագ տեսնըմ: Ինչ-որ ա, Ասլանը, որ ուակոտը տեղիցը վեր ա կենըմ, արազը պատմըմ ա մորը: Մերն էլ, դե կնիկ ա, էլի, կարըմ չի թաթառ նրատի, արազը հըրևանին ա պատմըմ, հըրևանը ուրա հըրևանին, սրհենց պերանից պերան տառնըմ ա կերան, հըսնըմ ա թաքավորի անգաճին:

Թաքավորը կանչըմ ա ուրա արազահանին հըրցընըմ, թա էտ ի՞նչ ա նշանց տալի:

Արազահանն էլ ասըմ ա.—Թաքավո՛րն ապրած կենա, էտ տը-ղեն որ սաղ մնաց, քու կըլիսին օյին ա պերիլու: Էտ ճակատակիր ա, արևը քու թաքավորութունն ա, որ ընդրա պաժինն ա տառնալու, լիսնյագն էլ քու ախճիկն ա, որ ընդրան ա ղըսմաթի ինիլու: Թա կա-րըմ ես, փորցանքի առաջն ա՛ռ:

Դե թաքավորն էլ ինչ աներ, որ լավ իներ, հըրամանք ա տա-լի, Ասլանին փըռնըմ են, տանըմ բերթի լավ վերի օթաղը, վըրեն էլ երկու զարավուլ են տինըմ: Ասլանին թողանք ըստեղ, մենք խաթարը տանք մորիցը:

Մերը որ լսըմ ա, թա ինչ սև ճուր ա թափել կըլիսին, կըլիսիը թակիլով քինըմ ա բերթի պատի տակին նըստըմ, ըսկըմ բայաթի սիլը, սուք ու շիվան քըցիլը:

Ասլանը բերթի կըլիսիցը ասըմ ա.—Ա՛ մեր, լաց մի՛ ինիլ, ինչ որ ասեմ, քինա նըհենց էլ արա: Վերչը լավ կինի: Քինա սիվտակ եղունիկիս վըգիցը մին կըծիկ թել կապի՛, պա՛ց տու, տու վէլ մին երգեն սիջիմ վե՛ր կալ, ե՛կ:

Մերը քինըմ ա եղունիկի վըգիցը մին կըծիկ թել ա օղ անըմ, կապըմ զափաղիցը պաց թողըմ, ինքն էլ երկու երգեն սիջիմ ա վեր ունըմ, կալիս: Մինչու տեղ ա հըսնըմ եղունիկը նըստած ա ինըմ Ասլանի ուսին:

Ասլանը թելի մին ճունդը կախ ա անըմ, մորը թա՛ կապի՛ սի-  
ջիմիցը:

Մերը թելը հաղակ ա անըմ սիջիմին պըտկիցը: Տըղեն ասսանց  
քաշըմ ա:

Հենց որ սիջիմը պըտուկը հըսնըմ ա ուրան, ասըմ ա.—Դե մըհի  
էտ ճունդը կապի՛ մեշկիցըտ,—մեկէլ ճունդը ինքն ա կապըմ հու  
բերթի էն մին պատովը քըշանըմ:

Իշքան ինքը սըղղըմ ա քաշ, էնքամ մերը պըցրանըմ ա պացըր:  
Հենց որ Ասլանը հըսնըմ ա տափին, մերը հըսած ա ինըմ վերի օժա-  
ղը: Սըհենցութունով տրդեն պըրծընըմ ա, մերն ա մընըմ դուսսա-  
ղըմը:

Էքսի օրը թաքավորին խարար են տալիս, թա՛ ասիլ չես, Ասլա-  
նի տեղը բերթըմը մին կնիկ ա նըստած: Թաքավորը քինըմ ա, դորթ  
որ Ասլանի տեղը մերն ա:

Դարավուզոցը կլյախը կըտրիլ ա տալիս, մորը հըրցընըմ:—Ա՛յ  
պառավ, ախըր ես քու տրդին ի փրոնիլ տվել, տու ըշտեղա՞ն լուս  
ընդար:

Մերն էլ, թա՛ հալղաղիա սըհենց ա իլել, վերչն էլ ասըմ ա.—Բա  
իմ տրդեն փրոնիկ տրդա էր, որ փրոնիկ իր տրվել, բա քու սըրտըմ  
խըդմըտանք ասած պանը կա՞ ոչ:

Թաքավորը մորը պաց ա թողըմ, համա քունը տանըմ չի, թա՛  
ոնց անի, ինչ թա՛հրով Ասլանին թաղաղան փրոնիկ տա:

Հենց էտ դաշիրըմը հըրեան երգըրից մին դարվիւշ ա կալիս,  
թաքավորի պալատի առաջին մին ջըղըզ ա քաշըմ, սուսուփուս մե-  
չին նըստըմ:

Երգըրի իմաստուննին հու աղսախկալնին վըհաքվըմ են, համա  
կարըմ չեն գիղան, թա՛ դարվիւշն ինչ ա ուզըմ: Թաքավորը հը-  
րամանք ա տալի, թա՛ ով որ կարա դարվիւշի ջուղարը տա, ուրան  
ախճըկանն ու թաքավորութունի կեսը կըտա ընդրան:

Էս խարարը որ հըսնըմ ա Ասլանին, կըլսին մին դառին ա քա-  
շըմ, տանըմ քաչալ, այլակերպվըմ ա, ճըղոտված շորերն էլ հըք-  
նըմ կալիս պալատը:

Հըսնըմ ա մեյղանին, թա՛ չէ, ջըղըզը կես ա անըմ, կեսը ինքը  
նըստըմ:

Դարվիւշը ծեռը տրնգըմ ա դըբան երգինքը, Ասլանը համ երգինքն  
ա նըշանց տալի, համ կետինքը: Դարվիւշը մին պաւոր կորեկ ա շաղ  
տամ ջըղըզի մեչին, Ասլանն էլ մին կուճի սինի յա տինըմ մեյղանը-  
մը: Դարվիւշը սուսուփուս ուրան դալաքըլեն վըհաքրըմ ա, քինըմ:

Թաքավորը հու իմաստուննին վըհաքվըմ են քաչալի կըլսին,  
թա՛ ասա՛ տենանք՝ Դարվիւշը ինչ էր ուզըմ:

Քաջալն ասըմ ա.—Դարվիչն ուզըմ էր ասած ինի, թա՛ էս ջըղզը Ասսու ստեղծած հողն ա, ես էլ կես արա, թա յանդիշ ես, կեսը հող ա, կեսը՝ ճակը: Էն նըշանց տըփավ երգինքը, ես էլ ասեցի՝ խի՞ յա մինակ երգինքը, ախըր կետինքն էլ կա, էն կորեկը շաղ տըփավ, թա աստըղներին լուսը շատ ա, ես էլ սինին տըրեցի, ասի՝ չէ՛, քու չիմմ աստըղնին մին ըրեքագի չարդանքը չեն: Էս մին մըսլութն էր:

Երգրորթ մըսլութն էլ էր, որ Դարվիչը ուզըմ էր ասած ինի, որ սաղ ախշարբը իմ թաքավորինն ա, ես էլ ընդրա դըրկածը: Ես էլ կես անկուվ հըսկըցրա, որ ախշարբի կեսն էլ իմ թաքավորինն ա: Դարվիչը՝ թա՛ իմ թաքավորը չիմմիտ հոքին կորոկի երգինք, ես ասեցի՝ իմ թաքավորն էլ ծեր չիմմին կը հանի երգինք, եղու կըտա տափովը, շանսատուկ կանի: Էղու Դարվիչը կորեկը շաղ տըփավ, թա մեր թաքավորը էսքամ դոչուն ունի, ես էլ ասեցի՝ մեր թաքավորը չիմմին մին սաջի մեջ աղանձ կանի:

Իմաստուննին թաքավորի կըտին ամոթով են մընըմ, որ մին քաչալ, ջընթըռոտը ուրանցից խելունք տուս եկավ հու տանըվ թաքավորի փեսեն:

Համա դե իշ փեսա, թաքավորն ուրան խոսկիցը ետ ա կաղնըմ, թա՛ իլածը թավը չի, ով ուրան փեսեն տանըմ, պետմա իրեք պայման կաղարի:

Պայմաննին ըստոնք են ինըմ.

Քաջալը մին քըշերվա մեչին պետմա մին ամարաթ չինի:

Էքսի քըշերը ամարաթի առաջին մին բաղ քըցի, որ պըտուղ տանըլանցալը:

Ընդա էքսի քըշերը ամարաթի քամակովը անցկենող կետը շուռ տա ամարաթի առաջովը:

Ասլանը ասըմ ա՝ լա՛վ, էտ էլ կանեմ, համա որ էս անքամ էլ խոսկիցը ետ կաղնար, վերը փիս ա ինիու:

Ասլանին չորս հընգեր են ինըմ, չորսըքանն էլ ախսերնի: Մինի անըմը Քերծուտող, մինինը՝ Քոքահան, մինինը՝ Կետկըտող, կուճիրինն էլ՝ Հողի անզաճ:

Առաջին օրը Ասլանը քինըմ ա Քերծուտողի կուչտը, դարդը պատմըմ, Քերծուտողն էլ թա՛ արխային քինա քընի՛: Ռավոտը, եփ վեր կենաս, տենալու ես թաքավորի պալատիցն էլ դաշանգ մին ամարաթ:

Ասլանը որ քընըմ ա, Քերծուտողը մին ոտը տընըմ ա մին սարի վրա, մին ոտն էլ՝ մեկէլի, հաղալիքի մընան ճաղացի քարերը վըշաքըմ ա, տընըմ ուրուր վրա, պատ շարըմ: Մեքին ամարաթը

Հաղիր ա ինըմ: Թաքավորը, որ ակուշկիցը տենըմ ա, աշկերին վը-  
հատըմ չի:

Էքսի օրը Ասլանը քինըմ ա Քոքահանի կուշտը, թա՛ բա ասիլ  
չես, սըհենց ու սըհենց: Քոքահանն էլ թա՛ քինա արխային քընի',  
քըշերը մին նըհենց բաղ տընգեմ, որ տանձ ու խնձորին տեղ ու  
թաթար չինի:

Քըշերը, որ կալիս ա, Քոքահանը ըստեղան-ընդեղան աժդա-  
հա պըտղատու ծառեր ա քոքքիվը հանըմ, մին օրավար հող նըհետը  
պերըմ ա, շարըմ ուրիշը կոփսկի: Ծեքը տալիս բաղը պաղրաստ ա  
ինըմ:

Թաքավորը, որ ակուշկիցը տենըմ չի, մընըմ ա մաթալ: Զիմ ծա-  
ռերը ճըկուած են ինըմ մըրքի ծանդրութունիցը:

Երորթ օրը քինըմ ա Կետկըտրողի կուշտը: Կետկըտրողը, որ  
լըմ ա հընգոր դարդը, ծիծաղըմ ա, թա՛ տընաշե՞ն, ուզըմ ե՞ս, օխ-  
տը կետ շուռ տամ մին սըհաթըմը: Բա էտ էլ դիլխոր ընդնիլի պան  
ա՞:

Էտ քըշեր էլ Կետկըտրողը ամարաթի քամակիցը քինացող կե-  
տի ճուրը խրմըմ ա հու պերըմ պաց թողըմ ամարաթի առաջը, ճու-  
րը հենց որ ուրան ճընապա յա պացըմ, մին աժդահա քար ա քըրը  
կետի առաջը, ճուրը շուռ տալիս: Ռավոտը թաքավորը, որ կետն էլ  
տենըմ չի, կըլխին տալիս ա, թա՛ բա քաչալը տանաշը իմ փեսեն:  
Համա զե չարեն ինչ, իրեք պայմանն էլ կադարել ա:

Քաշալ-Ասլանը որ մըննըմ ա պալատը թաքավորին ասըմ ա,  
թա՛ ես իմ խոսկի տերն իլա, տու էլ քու խոսկի տե՛րը իլ: Թաքավո-  
րը էլհամ մին մըհանս յա փրոնըմ. թա՛ էն Դարվիշը թագաղան  
եկել ա, տե՛ս, ի՞նչ ա ուզըմ, եղու կըլխոսանք:

Ասլանը քինըմ ա, տենըմ՝ Դարվիշը պալատի տըռանը մին  
լաշակ ա փըոել կոփսկին նըստել: Զիբիցը մին սըխտոր ա հանըմ,  
փըթաթըմ լաշակի մեջին, տալիս Դարվիշին, Դարվիշը ուեհելը  
քաշըմ ա:

Ասլանը կալիս ա պալատ, թաքավորը հըրցընըմ ա.—Հը, Քա-  
չա՛լ ախսպեր, էս անքամ ի՞նչ էր ուզըմ:

—Հե՛չ, թաքավո՛րն ապրած կենա, մին լաշակ էր պերել, որ քը-  
ցես կըլխիտ, պայց ես ասեցի, որ մեր թաքավորը ուրան խոսկի տեր  
տըղամարթ ա, լաշակը քու թաքավորին կըսազի, մեջին էլ սըխտոր  
տիրա, որ տանի տա ընդան:

—Բա սըխտորն ինչի՞ մհար ա, —հըրցընըմ ա թաքավորը:

—Դե սըխտորը տեղ-տեղովը կոփսկը ա, էլի, ընենց որ հաղըր-  
վի', հըրևանըտ դոշունով կալու վա:

—Հա՛, դե որ ըտենց ա, կոփվը որ պրօքնենք, ընդանա եղը կը-մըտածենք քու հըրաբնքի մհար: ՄՇի քինա՛, ես հըրամանք պետմատամ իմ զորքին, որ վըհաքվի:

Ասլանը էծոտած տուս ա կալիս, քինը հընգորոնց կուշտը, թա՛ բա ասիլ չեք, թաքավորը սըհենց մուլսաննաթութուն ա արել:

—Ոչի՞նչ, —ասըմ են հընգերնին, —էքուց-էլօր քիթը կըհըղը-դորվի, խելքի կըկա՛:

Ըստեղ Հողի անգամն ասըմ ա. —Ախապե՛րք, իրեք օրվա ճընապա հեռու մեծ դոշուն ա կալիս, ի՞նչ խաղաք ա:

Ասլանը կըլիի յա ընգնըմ, որ հըրևան թաքավորի դոշունն ա կալիս, որ սըխտորի աջըղը հանի, համա պան չի ասըմ:

Էտ դարըմը ուրանց թաքավորի զորքն ա իրերմ: Զուռնապըհով քինըմ են կոփիկ: Համա կոփվը որ ըսկարմ ա, թըշնամին ըսկ-սըմ ա մեր թաքավորին նեղիլը, վերչն էլ եսիր ա տանըմ: Ով սաղ ա ինըմ, էտ պանը տենըմ ա, ճըղըմ ա, որ ուրա կըխին ազադի:

Ասլանն էլ, որ լրաըմ ա թաքավորի եսիր ընգնիլի խաղաքը, հընգորցը ասըմ ա. —Մըհի մեր վախտն ա եկել, կարանք մեր հունարընշանց տանք:

—Բա էլ ո՞ր օրվա ախապեր ենք, որ մին դոշունի հախից էլ ա կանք ոչ, —ասըմ են հընգերունքը, հու Քերծուտողը մին ոտը մին թափի յա տեմ անըմ, մինը՝ մեկէլին, կետկըտրողը ընգնըմ ա կետի ճըրին, Քնքահանը ծառերն ա քնքահան անըմ, հու ընգնըմ են դունի ջանին:

Քերծուտողը մին դոլից ա ճաղացաքարերը կարկուտի պես թափը կըլիներին, Ասլանն ու Հողի անգամը մին դոլից են ճարթըմ, Քնքահանը ծառերը վե կալած մեյդանն ա սըրփըմ, կետկըտրողն էլ կետի ճուրն ա պաց թողըմ, որ թող չինի:

Մինչու քըսօր չիմմ դոշունին ճարթուխուրթ են անըմ, ուրանց թաքավորին ազադըմ, ընդանց թաքավորին եսիր վեր ունըմ, նոր նըստըմ են դինջանալի:

Թաքավորը հըրցընըմ ա. —Էս ո՞ւմ հունարն էր, ա'յ մարթիք:

—Թաքավո՛րն ապրած կենա, փեսիտ հունարն էր, մին քիչ էլ մերը: Դե մըհի էլ խանգարող պան ըրկա, փեսիտ էլ հետրտ տա՛ր հու մին կարքին հըրսանիք արա, մըտահան չանես, մեզ էլ կանչես, —ասըմ են հընգերնին, —էս մարթը քաշալ չի, մին իգիթ, մին փահլըվան ապան ա, անըմն էլ՝ Ասլան, փեսիտ տեսած արազը իմաստուն ա իլել, ճակատի կիր ա իլել, որը ոչ մի պանով փողըլմիշ չի ինիլ, արազըմը տեսած մին ուսին վեր եկած արևը քու թաքավորութունն ա, որի կեսը պետմա տիր, մհի սաղ ես տապու, մին ուսին

Եկած լիսնյագն էլ քու մարալ ախճիկն ա, որ տալու ես մեր ախպե-  
րացըվին: Թո պարով-խերով վայելի ուրա ճակատակիրը:

Հընդերոնց ասածովն էլ ինըմ ա: Ասլանը տանը մաքունը ա ոչ թա մին  
երգըրի, այլ երկու երգըրի թաքավոր, հու ուրա թաքուհու նհետ  
ապրըմ են: Թա մեռած չինեն, գիղացեք, որ մըհի էլ են ապրըմ:

Սըհենց պաներ:

